

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Երկնամերձ են ու ձույլ աշտարակում փակված զանգերը Նոտրդամի,
Աստվածներ են բազմել Իսակևի կանաչ խոյակների վրա,
Ժամերգության պահին հավերժության նման պապանձվում է քամին
Պետրոս առաքյալի շքեղ եկեղեցու կամարների ներքո:

Պատմություն ու ներկան, երկու ախոյաններ, դեռ վեճի են նստած
Սակրեկյոր կոչվող ճերմակ եկեղեցու դատարկ սրահներում,
Դեռ Ավետյաց երկրում դամբարանն է հառնում տեգահարված Տիրոջ
Ու նա մեզ է գալիս ճանապարհը կորցրած ժամանակի միջով:

Աղոթել եմ հաճախ գոթական խաչաձև տաճարների բակում,
Թաքուն աստված կանչել հելլենների թողած հպարտ Ակրոպոլում,
Խաչակնքել մի օր լեռների մեջ նիրհող Տրոանի վանքում*,
Տրոյայի նախկին փառքը շնչավորել Հորդանանի ափին:

Ամեն հոգում տաճար, ամեն հոգի վանք ու հատուկ սրբատեղի,
Խաչագմբեթ մատուռ՝ աստվածատուր սիրո կանաչ նախաշեմին,
Ամեն հոգի՝ բաց դուռ անմահություն տանող բանուկ ճանապարհին,
Պաղատանք ու երկյուղ, անպարագիծ աղոթք՝ աստծու եկեղեցում:

Սակայն չկա մի տուն, ուր ինձ համար Տերը այնքան մոտիկ լինի,
Այնքան շոշափելի, շողարձակ ու ստույգ, ինչպես այս հին վանքում,
Այստեղ ամեն մի քար մի տաճար է կանգուն, մի պատառ է հիմնից,
Լյառ է սրբազնագույն, ժամանակի շառաչ, հավերժության ակունք:

Այստեղ ամեն մի քար իր երանգը ունի ու խորհուրդը վերին,
Երգ է արևահամ, վերք է արյունածոր, կապուտաչյա ժպիտ,

---

* Վանք Բուլղարիայում:

Խաչագծված երկինք, սուրբ գրական մորմոք՝ մոմերի շուրթերին,
Այստեղ ամեն մի քար՝ պատմությունից եկած ուսուցիչ ու դպիր:

Օ, ո՛չ, ես չեմ ժխտում վեհությունը այլոց շքեղ տաճարների,
Վեհաշուք են անշուշտ թռչող կամարները երկնոտ Նոտրդամի
Ու հանճարի ծնունդ զարդանկար ու վեմ՝ Վատիկանի սրտում,
Իսակևյան գյուտը՝ երկնքի հետ խոսող կապույտ հրաշալիք...

Ես իմ աստվածն ունեմ, որ համեստ է գուցե այլոց աստվածներից,
Անատեղծ է ինչպես այգաբացի լույսը Մասսի կատարներին,
Լույսի նման վճիտ, հույսի նման զերծ է վախկոտ կասկածներից
Ու կատարյալ ինչպես մանուկ Արարիչը Աստվածամոր գրկում:

Ցուրտ է եղել, թե մութ, ամպոտ իրիկնամուտ, թե կապուտակ երկինք,
Ես խորանի առաջ մոմ եմ վառել երկնի անգութ արևներից,
Սուրբ են եղել անտուտ տառապանքը՝ տխուր աստվածամոր դեմքին
Եվ Հիսուսը մանուկ՝ նրա սիրագորով ու խնկահոտ գրկում:

Իմ պապերի ձայնն է արձագանքում այստեղ ժայռեղեն պատից,
Ես բողոք եմ լսում նրանց երկնամխիթն անչար աղոթքներում,
Կորուստների թախիծ, փախստական կարոտ, ազգանպաստ վճիռ,
Հավերժելու պատիվ, հավերժելու պատիժ՝ նրանց աղոթքներում:

Օ, ո՛չ, ես չեմ ժխտում վեհությունը այլոց շքեղ տաճարների,
Գեղեցիկ են նրանք, անզուգական գուցե, գուցե անկրկնելի
Ես իմ տանջվածն ունեմ, ես իմ խաչվածն ունեմ, ես իմ՝ անկրկնելին,
Որ տարբեր է մի քիչ, որ նման չի երբեք իր հետ խաչվածներին:

Հին է, ամենահին. Դարեր են ծանրացել նրա կամարներին,
Նրա կնճիռներում դարեր են համրացել ահա քանի դարեր,
Նրա գմբեթներից ճառագել է Տիրոջ լույսը անմարելի,
Խաչով լուսավորել բնություն ու տարերք արշալույսից առաջ:

Նա՝ նոր Նոյան տապան՝ հավերժ նոյաբնակ Արարատի դիմաց,
Նա՝ հոյակապ կամար՝ աստվածային սիրո խոյակների վրա,
Նա՝ բանաստեղծ արքա, իմաստության քանքար, բանաստեղծի հիացք,
Կենսանորոգ կրակ՝ հավերժ հայաբնակ Արարատի ներքո:

Օ, ո՛չ, ես չեմ ժխտում վեհությունը այլոց շքեղ տաճարների,
Գեղեցիկ են նրանք, անզուգական գուցե, գուցե անկրկնելի,
Ես իմ տանջվածն ունեմ, ես իմ խաչվածն ունեմ, ես իմ՝ անկրկնելին,
Որ տարբեր է մի քիչ ու նման չի երբեք իր հետ խաչվածներին:

Ագատավան,
06.09.92 թ.